

ՆՈՐԱԿԵՊ

ԱՐՄԵՆԱԿԻՆ ՅՈՅՍԵՐԸ

(Շար. տե՛ս էջ 457)

Արեւը դեռ նոր մարը կը մտնէ, կարմ-
րագոյն վերջալոյսին մէջ ուղողուած են ա-
րեւմուտքի լեռները, որոնք կը խնդան կար-
ծես այրուած գիւղին դիմաց : Խումբ մը
օրիորդներ կ'անցնէին փողոցներէն . եթէ
այս ժամուս՝ ասոնց հանդիպէր զիւղացին
կամ անտառի մը մէջ, կամ առուակի մը
եզերքը և կամ աղբիւրի մը կողքին՝ սար-
սափահար պիտի փախչէր իրբեւ թղզ-
մեզ աղէկներէ՛ :

Բայց հիմայ նորէն սարսափահար կը
փախչին ասոնցմէ զեղջկուհիները : Ամէն
անգամ որ խումբին մէջ նոր անձ մը կ'ա-
ւելնար՝ պահուրտած ժողովուրդը իր տան
մէջ արցունքով կը փսփար .

— Խեղճ . . . (Մարիամն) ալ բռնուե-
ցաւ :

Այս խումբը շրջապատուած էր ութ-
տասը թելտերով, որոնք իրենց դակերնե-
րով բուրբակ մը կազմած էին . և այս բու-
րբակին մէջ գունատ էին անոնք, և հա-
զիւ կրնային շնչել :

Որոշուած էր ասոնց նակատագրերը : Ու-
րիշ անգամներ շատերուն քոյրերը թել-
տերու յարձակումին մէջ՝ այսպէս բռնուած,
տարուած և ալ չէին դարձած : Ասոնք ալ
կամ պիտի քրդանային և կամ իրենց ա-
րիւնտով իրենց պատիւը և դաւանանքը պի-
տի պաշտպանէին : Եւ արդէն բանի մը
զիւցագունահիներ փորձած էին սուրէ շրջա-
նակէն դուրս փախչիլ . և ահա՛, դեռ կը
կաթկըթէ անոնց արիւնը քանի մը սուրե-
րու վրայէն :

1. = Քամ զմեզ աղէկ. յաւերճարեցրու խումբը
ասոցներու հետ երեւան կու գայ. ասոնց վրայ շատ մը
պատմութիւններ ունի ուսմիկ ժողովուրդը :

— Հոս ալ մէկը կայ, — մրմնաց թել-
տերէն մէկը, մատը երկնցնելով խանձուած
սիւներու խումբին :

— Խեղճ Նուարդը պիտի ըլլայ, —
փսփացին իրարու գերեպաշտերը :

Քիւրտը արդէն դէպ ի հոն ուղղուած
էր, որ աւելի մօտէն զննեց և կրկնեց .

— Մեռած չէ . . .

— Զեռքը նակտին դիր, — ըսաւ ու-
րիշ մը :

Տրուած հրահանգը կատարելէն վերջ՝

— Այո՛, ողջ է, նակատը տաք է, մա-
րած պիտի ըլլայ :

— Մե՛ծ է :

— Հագիւ տասնըչորս — տասնըհինգ
տարեկան պիտի ըլլայ :

— Ախո՛ս. մրմնաց ուրիշ մը :

— Զուր գլխուն վրայ, ջուր. պոռա-
ցին այն ատեն քանի մը թելտեր :

Աղբիւրը արդէն մօտ էր . երեք շորս
թելտեր՝ իրենց ափերով շարունակ ջուր
լեցուցին Նուարդին զլիտուն վրայ : Եւ անա
թշուաւը բացաւ աչքերը այրուած սիւնե-
րուն տակ . վերցուց զլուխը մայրիկին ած-
խացած կուրծքէն . և նորէն՝ նորէն կան-
չեց « Մայրիկս » :

Նուարդն ալ սուրէ շրջանակին մէջ
մտցուեցաւ : Քիւրտերը զինքը դէպ ի Պո-
լիս տարուող խումբին մէջ համրեցին :

*
*

Արմենակը արդէն վատուեցած Ամերի-
կայի մէջ՝ իր հիւանդ մայրիկէն կրկին ու
կրկին նամակներ կը ստանար . որոնց մէջ
մայրը արցունքով կը պաղատէր որդւոյն
հայրենիք վերադառնալ : Ասով կը յուսար
խեղճ կիներ իր առողջութիւնը գտնել : Ար-
մենակ համոզուեցաւ . վասն զի ինքն ալ
իր առաջին ուժը մօրը քով գտնել կը յու-
սար :

Նուարդին բռնուելէն մի քանի օր վերջ
իր հայրենիքը կը մտնէր Արմենակ . Զգեստ-
ները, զլիտարը և կրած հիւանդութիւննե-
րը՝ զինքը իրբեւ անձաօթ հչիւր մը ներ-
կայացուցին իր ծննդավայրին :

Իրիկուան դէմ էր . պատանին իր այ-

րուած գիւղին մէջ կը թափառէր իր տու-
նը գտնելու: Դեռ կ'ողորային մայրերը ի-
րենց զոհերը. և ողբը՝ այսպիսի աւերակ
տուններու մէջէն՝ անտարբեր անծին ար-
ցունքներն ալ կ'առնուր: Կը տեսնուէին
մայրեր՝ որոնք պատուհանին դիմաց իրենց
մազերը կը փետտէին, և կամ սպաննուած
որդի մը կու լային, և կամ՝ իրենց յափըշ-
տակուած դուստրը: Յաւր, կակիծը, տգէտ
ժողովուրդը մէկ մէկ տխուր բանաստեղծներ
դարձուցած էր. ամէնքը դիւցազնեգրուներ
եղած էին — բայց՝ արցունքոտ: Արմե-
նակ աչքը աւերակին, ականջը՝ ողբին դեռ
կը շրջի. տրոփում մ'ալ սրտին վրայ —
« Եթէ լսեմ մայրեկիտ ողբը Նուարդին
վրայ » ...

Պատանին իր թաղին մէջ էր. մօտիկն
էր այն աղբիւրը՝ որուն դիմաց ամառուան
սառունները մեծ եղբայրը զինքը քովը կե-
ցուցած, այս աղբիւրին ճակտին վրայ ե-
ղած արձանագրութիւնը իրեն համար ըն-
թեքցման վարժութեան էջ մը կը ծառա-
յեցնէր: Աղբիւրին մօտիկն էր իրենց հիւղը,
հոս, ուր որ այրուած գերանները ընկած
էն. ճիշդ հոն պիտի կանգնուէր իրենց
տունը:

Նոյն վայրկենին՝ մեծ սափոր մը կողին՝
աղբիւրին կը մօտենար կին մը, որ երկու
անգամ կասկածոտ նայուածքներով՝ ան-
ծանօթ երիտասարդին հասակը չափեց:

Արմենակ՝ կնոջ մօտեցաւ և հարցուց.

— Հոս մօտն է Սրբուկենց տունը:

Կինը կոկորդին մէջ սեղմեց յուզումը, և

— « Աստուած հոգին լուսաւորէ » ըսաւ

նախ, յետոյ՝ — Ուսկից կը ճանչնաս զինքը:

Եւ վերջին հարցումը դեռ բերանը՝ տե-
սաւ՝ որ զուեստեցաւ անծանօթը, և ին-
կաւ տանը մոխիրներուն վրայ:

— Ահ, Աստուած պէրս տայ, պոռաց
կինը — Արմենակն ես. և սափորի ջրով՝
խնդն պատանին ոտը հանեց:

Թշուառ կինը իրբու մոխրաթուփուն մը
Արմենակին՝ հեկեկալով ըսաւ.

— Շարթուան մէջ կորսնցուցի երկու
տղաքս, աղջիկս: Փառք տուր Աստուծոյ,
քոյրդ ողջ է:

Արմենակ, տէր Կարապետին ողջ ըլ-
լալը իմանալէ ետք՝ անոր տունը դիմեց.
զայն աւերակ գտաւ. և անոր ցցուցին
փոքրիկ հիւղ մը որուն չորս կողմի ծա-
կերէն կը նշմարուէր ճրագի նուազ լոյսը
տխուր զէմքի մը դիմաց. և այդ նուազ
լոյսին մէջ կը նշմարուին երկու շրթունք-
ներ ազօթքով դողողացող՝ և երկու աչքեր
արցունքով փայլելով:

Երբ կամաց մը դուռը զարկաւ Արմե-
նակ՝ իր դիմաց գտաւ ազօթող ծերունին՝
երկայն, պատտած և ազտոտ խրխայով
մը:

— Հոն կը կենայ տէր Կարապետ քա-
հանան. հարցուց Արմենակ անծանօթին,

— Աստուծոյ օրհնած, չե՞ս ճանչնար
զիս. ըսաւ ինքը տէր Կարապետը, զայն
բազուկներուն մէջ առնելով:

— Դո՛ւք էք տէր հայր ...

— Ահ, այս հիւղը մնաց ինձի. ուրիշ
բան չունիմ, Աստուած և գերեզմաններ ...

— Բարե իրեցիկներ ...

— Աստուած հոգոյն ողորմի. ալ մի՛
հարցնե՛ր, ես միայն մնացի, կրկնեց տէր
հայրը արտասուելով:

— Պետքոս աղբւրը ...

— Անոր չարատանջ մահը Աստուած
ղրկեց: Ինձմէ՛ ծածուկ գողցած էր 150
տողարդ ...

— Տէր հայր, տեղեկութիւն մ'ունի՛ք
քրոջս մասին:

— Այո՛ փախուցած են. այսօր լսեցի
որ քիւրտերը զինքն ալ Պօլսոյ կողմերը
ղրկած են:

Այս լսելուն պէս ոտը ելաւ Արմենակ
և ուզեց հիւղին դուռը բանալ:

— Բարձր մնաց տէր հայր:

— Որհնած, դէպ ի ո՛ր. հարցուց տէր
հայրը ոտքի ելնելով:

— Քրոջս հետ մեռնելու՛ կամ ապրե-
լու. երկուքէն մէկն է ճակատագիրս:

— Կեցի՛ր, կեցի՛ր. ես ալ ուխտ մ'ու-
նիմ. ես ալ պիտի մեռնիմ կամ պիտի
ապրիմ քեզի հետ. որդիս ես ասկից վերջ.
հայրդ եմ. — ըսաւ տէր հայրը բռնած Ար-
մենակին ձեռքէն. և յուզումաւից տաք

համբոյրով մը ճակտին՝ զայն իրեն որդին ըրաւ:

Եւ երբ քանի մը վայրկեան լուսթիւնը հանդարտեցուց իրենց յուզումը՝ խօսք առաւ տէր հայրը.

— Մենք, ըսաւ, խմբովին այդ կողմերը պիտի դիմենք. արդէն ճիշտ անգղը կհսօր ճամբայ կ'ելնենք. տես, նայէ պատրաստած եմ մախաղս. և պիտի ստիպուիմ մուրաւ . . . Նորէն լացաւ: Արմենակ խաղաղեցաւ, և տէր հօր փորձիկ հիւղին մէջ լուսցուց:

Երկրորդ օրը, խումբ մը տեղացի գաղթականներ, որոնք նոր կորսնցուցած իրենց որդիքը, տուններին, ոմանք իրենց ծնողքը և եղբայրնին, եկեղեցին ծնկի եկած՝ կ'արտասուէին հեղեղօրէն: Աղթեցին անոնք. արտասուքը, յոյսը և հաւատքը աղօթել տունն անոնց: Յետոյ նոյն խումբը դիմեց գերեզմանատուն. գաղթականներուն գերեզմանի այցը շատ յուզիչ էր. առանց խոտի գերեզմանները որոնց մէջ էին անմեղ զոհերը, պիտի յանձնէին երկնքի արցունքին և բուերու ողբին. և կը տարուկուէին՝ թէ իրենց ոսկրները թերեւս հետու պիտի մնային այս սրբազան վայրէն:

Հոս էր Արմենակն ալ, ան կ'ուզէր մօրը գերեզմանին վրայ թափել իր սիրտը գալարող արցունքը. — մայրիկը մոխիր դարձած էր —:

Արմենակ գնաց թաղուեցաւ հօրը գերեզմանին վրայ բարձրացող փշալից խտերուն մէջ. ափին մէջ առած ոսկիներու ծրարիկ մը՝ անոր ականջին երդուրեցաւ.

— Հայրիկ աճա աշխատանքիս վերջին պտուղը. ասոնցմով պիտի ազատեմ Նուարդը . . .

*

Իրիկուան դէմ աղքատներու խումբ մը կարին կը հասնի և ուղղակի ժամատուն կը դիմէ. Արմենակ կը տեղեկանայ հոն որ երկու քիւրտեր երէկ իրիկուան դէմ զէպ ի Պոլիս տարած են թօփրագ-գալէցի աղջիկները, որոնց մէջ պիտի ըլլար ապահովապէս Նուարդը. երկրորդ օրը ճամ-

բայ կ'ելնեն կարինէն և մուրաւով ամիսներ վերջ կը հասնին Պարտիզակ:

Պատմութիւնը լինցնելէն վերջ՝

— Հոս ենք հիմայ, Աստուած պիտի պահէ զմեզ. ըսաւ բարի ծերունին, բազուկները վեր վերցուցած արցունքով լեցուած աչքերուն հետ:

Մենք տխուր թմրութենէ մը ստափուելէն ետք.

— Աս է Արմենակը, հարցուցինք ծերունիին կամաց ձայնով մը:

Գլխով հաստատեց ծերունին և տաց արցունքներէն մի քանին Արմենակին այրուող գլխուն վրայ ձգեց:

— Ուրեմն դուք էք Տէր կարապետ քահանան. այս հարցումը չկրցանք կամաց ձայնով ընել, այնպէս որ Արմենակն իսկ լսեց, և անուշ ժպիտ մը երեսին՝ մեղմ ձայնով մը ըսաւ:

— Այո՛, շատ:

— Մենք շատ կը սիրենք մեր մայրենի երկրին զաւակները, ըսաւ մեր ընկերը կարապետ պատանեկան յուզումով. — մի քանի օրէն կ'աղէկնաս, և մեր սէրը գործով պիտի ցուցնենք քեզի:

Նորէն լուսթեամբ ժպտեցաւ Արմենակի Յետոյ ծերունիին դարձանք և հարցուցինք:

— Նուարդը չկրցանք գտնել տէր հայր:

— Չէ՛. բայց Աստուած մեծ է:

(Մենք յետոյ իմացանք՝ որ Նուարդը ազատած էր: Երբ կարինէն կը մեկնին քիւրտերը և թօփրագ-գալէցի աղջիկները՝ նոյն իրիկունը սեւ-սեւ ամպերը կու գան ծածկելու աստղները և լուսինը. և անա յանկարծակաւ անձրեւէ մը կը ստիպուին կարնէն դեռ նոր դուրս ելած՝ տուն մը ապաստանիլ: Բարեբախտաբար զասոնք հիւրընկալող տունը հայու մը կը վերաբերի. որոնք աղջկանց լուսթենէն եղելու թիւնը կը գուշակեն:

Քիչ վերջ անձրեւը կը դադրի, բայց դեռ լուսինը ամպերէն դուրս չէ ելած. Քիւրտերը կը մեկնին հայուն տունէն կէս ժամ հետու գտնուող գիւղի մը մէջ գիշերելու

համար: Երբ նեղ համրէ մը կ'անցնէին՝ վեց եօթը զինուած երիտասարդներ քիւրտերուն վրայ կը յարձկին, իրենց թաշկինակներով զանոնք կը խղզեն:

— Ազատուած է՞ք, կ'ըսեն թշուառներուն՝ և կ'անյայտանան:

Նոյն գիշերը կարին կ'անցընեն և երկրորդ օրը հեռուոր ճամբաներով իրենց այրուած գիւղը կը հասնին լուսնին լոյսով:

Նուարդ երբ կ'իմանայ թէ Արմենակը դարձած է Ամերիկայէն, և զինքը փնտռելու համար Պոլսոյ կողմերը դիմած է տեղացի գաղթականներուն հետ՝ մի քանի օր վերջ ինքն ալ ուրիշ խումբի մը հետ կը մեկնի եղբորը հետեւն հասնելու համար...):

*
**

Երկու օր վերջ երեքշաբթի առաւօտ կանուխ՝ կարապետը եկած էր զիս կանչելու:

— Գիտնս, ըսաւ ան տխրած, խեղճ Արմենակը ծանր է:

— Աղքատանոցէն կու գաս:

— Այո՛, ուղղակի անկից կու գամ, ծերունի քահանան կ'արտասուէր:

Ես իսկոյն վար թռայ: Մըտիին ձայն տուինք և աղքատանոց դիմեցինք անխօսուն:

Երբ ներս մտանք ծերունի քահանան Նարեկ կը կարդար, միւս աղքատները մտքերին անոր սեւեռած՝ աղօթքին կը մասնակցէին: ուրիշ հասակաւոր մը Արմենակին ձեռքերը իր ձեռքերուն մէջ առած՝ դիմագիծը անոր երակներուն բարաման հետ կը փոփոխէր:

Մեր հանած աղուովէն գոց աչքերը բացաւ Արմենակ. զլիւտ շարժումով բարեւեց զմեզ և դառն կերպով ժպտեցաւ: Ժպիտ մը՝ որ շատ անբնական էր նիհար և գունատ դէմքի մը վրայ: Երբունին կամաց ձայնով մը հիւանդին ականջն ի վար ըսաւ:

— Կը ճանչնաս, անցեալ օրուան բարեսիրտ պատանիներն են:

Արմենակ՝ նորէն բացաւ աչքերը, և նորէն ժպտեցաւ և նորէն փակեց:

Միւս հասակաւոր անձը՝ այլագունի սկսաւ. մենք այլայլած դէմքերով լուս՝ հարցումներ ըրինք անոր, և ան դողդուցող ձայնով տէր կարապետ քահանային ականջին փոփսաց:

— Չեղբերը պաղիլ սկսան:

Երբունի քահանան Նարեկը նորէն ձեռքըն առաւ, աւելի յուզմամբ շարունակեց իր աղօթքը, և մենք ալ փոխն ի փոխ կը հովահարէինք Արմենակին դէմքը:

Կէս ժամ վերջ՝ նորէն բացաւ Արմենակ աչքերը:

— Ձո՛ր ... կ'այրի՛մ ... հագիւ կրցաւ արտասանել այս երկու բառերը: Երբունին մեզի դարձաւ և կամաց ձայնով ըսաւ:

— Գէշ նշան է:

Ձուր շուգեցինք տալ հիւանդին, և ան ալ՝ արդէն իր խնդիրը չկրկնեց: Մի քանի վայրկեան վերջ առանց արցունքի կաթիլ մը քամելու աչքերէն՝ սկսաւ հեկեկալ Արմենակ:

— Ինչո՞ւ կու լաս, կ'աղէկնաս, կ'աղէկնաս. կրկնեց կարապետ:

Արմենակ՝ ձեռքով դիմացը ցոյց տուաւ և ըսաւ:

— Ձէ՞ք տեսնար, քիւրտերը մեր տունը կ'այրեն: Խեղճ հայրիկս, եղբայրս զարնուեցան, մայրիկս բոցերու մէջ է ...

— Կը զառանցէ, ըսինք իրարու մեր նայուածքներով:

Քիչ վերջ՝ նորէն լալ սկսաւ:

— Հիմա՞յ ինչու կու լաս, հարցուց տէր հայրը:

— Ձէ՞ք տեսնար, Նուարդը որք մնացած է. տեսէք Լիւսնիկը զինքը ինչպէս կը ծծէ:

Մենք նորէն լուռ կեցանք: Քիչ վերջ Արմենակ, իբրև թէ նախորդ խօսքերը ինքը ըսած չըլլար՝ սկսաւ հատաչանքներով անհանգիստ ըլլալ, տապալուրդիլ անկողնոյն մէջ. յետոյ նորէն հանդարտեցաւ և սկսաւ արագ արագ շնչել: Երկու անգամ խաչակնքեց և ժպտիլ սկսաւ, մենք այդ ժպտին դիմաց շատ զգածուեցանք:

— Ինչո՞ւ կը ժպտիս զաւակս, հարցուց տէր հայրը:

Արմենակ՝ նորէն մատը դիմացը ուղղեց ու ըսաւ :

— Ա՛մբրիկան է . . .

Եւ յետոյ մի քանի անգամ նորէն տապը լսեցաւ . մենք չկրցանք դիմանալ . դեռ առաջին անգամ էր որ մարմնոյն եւ հոգիին մենամարտութեան ներկայ կ'ըլլայինք . աչքերնիս գոցեցինք երբ ան զուգար տէր հօր ձեռքերուն մէջ դնելէն վերջ՝ աչքերը անթարթ՝ մեզի ուղղեց . լսեցինք ակռաներուն կրճտումը . և երկու անգամ հատաչանքներ հանելէն վերջ՝ ուրիշ երբորդ աւելի սաստիկ հառաչանք մը հանեց . . . և հանդարտեցաւ . . .

Աչքերնիս բացինք իրեն դիմաց . խնդճ Արմենակը կրբի պէս ճերմակ դէմքին վերայի կապոյտ աչքերը դեռ մեզի յառած էր . բերանը բացած՝ կարծես ճիգ կ'ընէր մեզի Ամբրիկան ցուցնելու . Ամբրիկան , յոյսերու աշխարհը . որ եկած էր սեղմուելու աղբատանոցի այս փոքրիկ սենեկին մէջ ճիշդ Արմենակին աչքերուն դիմաց :

Մենք երազային յուզումով թմրած՝ կը նայէինք ծերունի քահանային որ Արմենակին ճակտին արցունքոտ համրոյր մը տալէն վերջ՝ իր սպիտակ զուգար ձեռքերուն մէջ առաւ և մեզի դառնալով՝ հեկեկաց .

— Աստուած հոգին լուսատրէ :

Մենք մի քանի վայրկեան վերջ ինքզինքնիս գտած՝ իմացանք որ մեռելի մը մօտ ենք , թշուառ Արմենակին անշունչ մարմնոյն քով զոր այնքան սիրած էինք . լացինք երկար և անոր դեռ տաք ճակտին համրոյրներ տուինք : . . .

Նոյն օրը երեք ընկերներս մէջտեղ ընկանք շքեղ թաղում մ'ընելու : Ամենէն կարևորն էր քահանայ մը գտնել , ողորմած քահանայ մը՝ որ թշուառի մը թաղումը առանց վճարքի ընէր :

Մըռն առաջարկեց իրենց ծուխի քահանային դիմել . երեսու միասին գնացինք , բարեբախտաբար տէր հայրը հոն էր : Թէ որքան աշխատեցանք տէր հայրը համոզելու որ թշուառ Արմենակը առանց վճարքի թաղէ՝ Աստուած գիտէ : Բայց վերջապէս

յաղթանակեցինք « թէ ոչ վարդապետին կ'ըսենք » սպառնալով միշտ : Երկրորդ օրը կէսօրէն առաջ մեր միւս ծայնեղ ընկերները եկան շապիկ հագնելու . կարապետը իր հօրը գեղեցիկ սնտուկ մը շինել տուաւ . գարնանային ծաղկներով զարդարեցինք Արմենակը և դէմքը անոնցմով շրջապատեցինք :

Տխուր զանգակը հնչեց . դազաղը եկեղեցիէն դուրս հանուեցաւ , ընկերոջները միայն Արմենակին հայրենակիցներն էին և մեր ընկերները : Տէր կարապետ քահանան իր աղտոտ խրխայով , զուգար բաց՝ դազաղին գլխուն վերեւ կու լար անընդհատ . անոր երկու կողմը մենք կեցած էինք :

Մեր մտքին մէջ կը գծուէին միշտ գերեզմանի ճամբուն վրայ Արմենակին զառանցանքի առարկայները , — Ամբրիկան , Նուարդը և Լեւոնիկը :

Մեր գիւղի գերեզմանատան ճամբան՝ մասն է միանգամայն մայր շանսպորիին , անկէ պիտի անցնէին իզմիտէն հասնողները :

Երբ գերեզմանին բաւական մօտեցած էինք՝ երկու տղաքներ և միջակ հասակով աղջիկ մը , որոնք դէպ ի գիւղ կը դիմէին՝ շեղելով կանգ առին ճամբուն եզերքը , ամփոփածութեամբ մը կեցած սպասեցին որ դազաղը անցնէր իրենց առջեւէն : Անոնք բուպիկ էին , պատուած զգեստներ վրասին և մէկ մէկ մախաղ կողերուն վրայ ձգուած , իրենց մուրացիկ աղբատաներ ըլլալին կը մատնէին : Ճիշդ իրենց մօտիկէն անցանք , անոնք ամէկտու աչքերնին վար առած , կը խաչակնքէին և աղօթք մը կը մըթնջէին :

Ծերունի տէր կարապետ քահանան արցունքոտ աչքերը կողմնակի դարձուց , հեկեկաց . և երբ երեք աղջատները իրենց ճանապարհը դէպ ի մեր գիւղը շարունակեցին՝ կրկին հտեւ դարձաւ ծերունին և լալով մեզի ըսաւ .

— Նուա՛րդն է . . .

Ամենքս ալ լացինք . և միամտութեամբ կը յուսայինք՝ թէ Արմենակ մեր հեկե-

կումներէն անհանգիստ մեր արցունքներուն ներքեւ պիտի բանար աչքերը:

Ան չարթընցաւ:

Իր յոյսերը ժառանգ թողած էր Նուարդին. և թշուառ աղջիկը յոյսերով բերկրած կ'երթար իր եղբայրը գտնելու . . .

Հ. Մ. ՊՅՏՈՒՐԵԱՆ



ՊԱՍՄԱԿԱՆ ՎԷՊ

ՏԻՐԵՐԻՍԻ ՆԱԻԱՎԱՐՆԸ

(Շար. տե՛ս էջ 516)

ԳԼՈՒԽ Ժ.Բ.

ԿՂԵՄԵՆՏԻԱ ՊԵՏՐՈՆՆԻԱՅԻ

Մ Ա Ա Ն

Կղեմենտիա Պետրոնիայի տան ճոխ սրահներն բոլորովին ամայի դարձեր էին, և մեծ խառնափնդորութիւն մը կը տրէր հոն. գեոտի տապալուած ետոտանի սեղաններն չէին արտաշնչեր անոյշ բուրուցներ, փղոսկրապատ փայտեայ դառաններն բացուած էին, թիկնաւոր անկողիններն մնացեր էին՝ առանց ծիրանի ծածկոցներու. ամէն ինչ կը ցուցնէր, թէ գերիներն իրենց տիրուէն երեսի վրայ թողնել առաջ, ամէն անկուն պրպտեր էին համարձակօրէն գողնալով: Այն փառաւոր սրահներն թաղածագին երեւոյթ մ'առեր էին: Մելանիա և Վաղերիա անոնց միջէն կ'անցնէին չափազանց զգուշութեամբ մը, որպէս զի չընդհատեն լուռութիւնը, այնպէս որ մուտքնի յատակին վրայ թալա՛ծ տանենին հազիւ կը լսելու իրենց ոտքի քայլերուն աղմուկը: Վաղերիան արդէն վարժ ըլլալով տան ամէն տեղերուն, կանգ առաւ զոց դրան մ'առջեւ, և ըսաւ Մելանիային թէ՛ կ'ից սենկիկն մէջ տո՛վոր էր պատկիւ պատերիկուհին. յետոյ Միտսիի դռնալով՝ ցոյց տուաւ թիկնաւոր անկողին մը, և ըսաւ անոր. « Զնազն՛ հոս և սպասէ մեր վերադարձին »: Վերջը բացաւ զոց դուռը, և պատրիկուհիէն առաջ անցնելով՝ մտաւ կղեմենտիա Պետրոնիայի սենեակը:

Այս սենեակս կից սրահներէն շատ աւելի մեծ խառնափնդորութեան մը մէջ կը գտնուէր. դառաններն բացուած էին, զորոցներն կոտորուած, վարագոյրներն պատուած, և մինչև իսկ հոգեվարքի անկողինն փռոցներն կը պակսէին: Այն անձնասէր և ունայնասէր կիսն, որ ընաւ թշուառներուն այցունքը սրբած չէր, երբեք զժբախ-

տի մը օգնած չէր, մէկու մը վրայ գուլթ ազդած չէր, և իր անարգ ծառաններն ալ ամէն բան կը դողատնէն վերջ՝ զինքը հոգեվարքի մէջ թողուցնէր գացնէր էն, և միայն միւսներէն նուազ անհոգութեամբ գերի մը անդատակին մէջ կախիւր էր նուրի ճիւղը, որպէս զի Մեռելաթաղներն գան վերցնեն զիակը:

Չաղատ գլխով, կապուտակ դէմքով, ապակեմանա գուրս ելած աչքերով, կղեմենտիա սուաւնի մը մէջ պլլուած պատկեր էր մահուան անկողնիկի մը վրայ. և մոլեգնաբար կը դառնար երբեմն մէկ կողմը և երբեմն միւս կողմը, զուր տեղ կանչելով իր մտերիմ աղախինը՝ որպէս զի թասը մօտեցնէ իր ցամքած շրթունքներուն. բայց ոչ ոք կը պատասխանէր անոր, և թանձրու կանայտրակ լորձուկը մը կը խղզէր խեղճոր բոլորովին յուսահատած՝ կը ճանկուտէր կուրծքը հեծեծազգին:

Շաւառացեալին մահն սիրտ կը շարժէ և հիւսցումն կ'ազգէ: Մեծ ու վսեմ է անոր թէ՛ լուծուող մարմնոյն և թէ հոգւոյն երեւոյթն որ հաւատարմով և յուսով զօրացած՝ կը մաքառի զինքը երկրիս հետ կապող բնագոյումին հետ: Բոլորովին համակամ և աներկիւղ, արդարն կը պատրաստուի վերջին ճամբորդութեան, և յարտեւնակութեան սեմին վրայ կ'եցած՝ միաք բարով չըսեր իր սիրելիներուն, վասն զի կը յուսայ նորէն տեսնել զիրենք երկնային հայրենիքին մէջ. բայց անհաստիս մահն ստակալի է. իրեն համար ամէն բան կը լինայ մահուամբ, ոչ յոյս ունի և ոչ միլիթարութիւն: Մահն զարհուրելի պատիժ մ'է՛ անոր համար՝ որ մարմնով միայն ապրած է և բնաւ հաւաք տունեցած չէ Աստուծոյ վրայ, որ ստեղծած է մարդը ոչ եթէ իւստափուկ ստուերի մը պէս երկրի վրայ ապրելու և յետոյ ոչնչութեան մէջ գաւազիժուելու համար, այլ ընդհակառակն ապրելու համար անվախճան ժամանակին մէջ:

Մելանիա և Վաղերիա զարհուրած կը նայէին առջեւնին պատկած պատուիկն վրայ, և սարսռելով կը լսէին անէծքները, զորս կատաղութիւն հանել կու տար անոր շրթունքներէն՝ տեսնելով որ բոլորովին երեսի վրայ թողուած մնացեր է. վերջապէս Մելանիա իր ընդգիծութեան յազթնելով, ան հետեւին մը վրայ դուռած ջրալից թաս մ'առնելով մօտեցաւ հոգեվարքի անկողնին քով, և վեր բարձրացնելով անոր գլուխը՝ խմել տուաւ:

Սաստիկ շերմէ բռնուածի մը պէս՝ կղեմենտիա անայտօրէն պարպեց թասը. յետոյ աչքը ողորժած կնոջ վրայ զարհուրելով՝ ճիւղ մը հանեց և նորէն ընկաւ բարձին վրայ՝ վիտն ձեռքներով սեղմելով զՄելանիան: Կղեմենտիա թէպէտեւ բնաւ խօսած չէր Մելանիային հետ՝ բայց այսու հանդերձ կը ճանչնար զինքը. այս ծաղկահասակ և գեղանի քրիստոնեայ պատրիկուհուհին համբաւն՝ որ աշխարհէ հրաժարեր էր՝ նուիրելով իր պատրիկութիւն Աստուծոյ և արջառներուն՝ այնպէս իջարկն նախակն մ'ազգեր էր կղեմենտիային վրայ՝ ինչպիսի կը սնուցանեն միշտ չար անձիք աշխարհիս վրայ գտնուող ամէն բարի և մեծ բանի համար. ուստի երբ գանկկայ տե-